

# ՄՈՒՑՈՒԱԾ ՏԱՂԱՆԴ ՄԸ՝ ԺԱՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ

Posted on March 1, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



**Սովսէս Ծիրանի, Պէյրուք, 28 Փետրուար 2014**

Եթէ չեմ սխալիր 2000 թուականի սկիզբն էր. Նստած էինք Զագինօ Հաննուշէ (Դաանայէլ) ու կը գրուցէինք անոր տիրոջ՝ Էմիլ Հաննուշի եւ գեղանկարիչ Ռաշիտ Ուահպէի հետ: Օրուան խօսակցութեան նիւթը լիբանանահայ գեղանկարիչ Ժան Դարբինեանն էր: Մինչ այդ, թէեւ լսած էի անոր մասին, սակայն ոչ մէկ ստեղծագործութիւն տեսած էի անկէ: Էմիլ Հաննուշ Դարբինեանէն Նոր ձեռք բերած էր բնանկար մը, ուր պատկերուած էր հովիւ մը լեռներուն վրայ: Ի տես այս փոքր չափի բնանկարին՝ զարմացած էի ու հիացած միաժամանակ: Ռաշիտ Ուահպէ հպարտ էր, որ վրձնակից ընկերը եղած էր Դարբինեանի, սակայն ցաւով կը նշէր, թէ՛ ան լքուած ու մոռացութեան ենթարկուած տաղանդ մըն էր:



**Սովսէս Ծիրանի, Պէյրուք, 28 Փետրուար 2014**

Եթէ չեմ սխալիր 2000 թուականի սկիզբն էր. Նստած էինք Զագինօ Հաննուշէ (Դաանայէլ) ու կը գրուցէինք անոր տիրոջ՝ Էմիլ Հաննուշի եւ գեղանկարիչ Ռաշիտ Ուահպէի հետ: Օրուան խօսակցութեան նիւթը լիբանանահայ գեղանկարիչ Ժան Դարբինեանն էր: Մինչ այդ, թէեւ լսած էի անոր մասին, սակայն ոչ մէկ ստեղծագործութիւն տեսած էի անկէ: Էմիլ Հաննուշ Դարբինեանէն Նոր ձեռք բերած էր բնանկար մը, ուր պատկերուած էր հովիւ մը լեռներուն վրայ: Ի տես այս փոքր չափի բնանկարին՝ զարմացած էի ու հիացած միաժամանակ: Ռաշիտ Ուահպէ հպարտ էր, որ վրձնակից ընկերը եղած էր Դարբինեանի, սակայն ցաւով կը նշէր, թէ՛ ան լքուած ու մոռացութեան ենթարկուած տաղանդ մըն էր:



Ռաշիտ Ուահպէի վկայութիւններն ու բնանկարի կատարողական բարձր մակարդակը ոչ միայն հետաքրքրութիւնս շարժեցին, այլեւ յանցաւոր զգացի, որ մինչ այդ լուսանցքի վրայ ձգած եմ այս արժանաւոր արուեստագետը: Ռաշիտ Ուահպէ պատմեց, թէ ինչպէս Փոլ Կիրակոսեանը, Ժան Դարբինեանը եւ ինք յաճախ օդափոխութեան կու գային ժընէյլա (Շթորայի շրջան) ու երբեմն կը շրջէին Պեքաայի դաշտը եւ բնանկարներ կը պատկերէին: Ի միջի այլոց՝ ան տուաւ նաեւ Կալէնցի, Թորոս Տէր Յակոբեանի, Յով. Ասատրեանի եւ Թերճանի անունները, որոնց նոյնպէս կը ճանչնար եւ անոնց հետ եւս որոշ մտերմութիւն ունեցած էր:

Դարբինեանի բնանկարը մեր դիմացն էր՝ աթոռին վրայ. Ուահպէ մատնացոյց ընելով զայն ըսաւ, "Դրէք զայն Օմար Օնսիի եւ կամ Մուսթաֆա Ֆարրուխի քով ու պիտի համոզուիք, ու Դարբինեանը պիտի չտկարանայ անոնց դիմաց": Իսկ Էմիլ Հաննուշ հիացական բացազանչութեամբ մը ակեցուց, «Դարբինեանը համալիբանանեան արժէք է, ես գոհ եմ, որ անկէ գործ մը ունիմ, եթէ ուրիշներ ալ ձեռք բերեմ ակելի ուրախ կ'ըլլամ»: Ի դէպ, Էմիլ Հաննուշ շարքային արուեստասէր մը չէ, այլ ան լիբանանեան կերպարուեստի մեծագոյն հաւաքորդը կը համարուի, թէ՛ որակով եւ թէ՛ քանակով: Անոր քով կարելի է տեսնել նաեւ բացառիկ Փոլ Կիրակոսեաններ, Կալէնցներ, Թորոս Տէր Յակոբեաններ, Աշոտ Զօրեաններ, Նոյնի՛սկ հալէպահայ Եզեկելէն գեղեցիկ գործեր ունի: Երբ հարց տուի, թէ ի՞նչ տեսակ մարդ էր, եւ ո՞ր են հիմա անոր գործերը, Ուահպէ գլուխը շարժեց

ափսոսանքով ու ըսաւ. «Ոչ մէկը ունէր աշխարհի վրայ, խրճիթի մը մէջ կ'ապրէր նուազագոյն պայմաններով: Տուփեղէն միսը տուփով կը տաքցնէր քարիւղով բանող ու ձայնաւոր օճախի մը վրայ եւ ուղղակի անկէ կ'ուտէր...: Տառապեալ մըն էր, թշուառ մը, սակայն գիտակից իր տաղանդին, հպարտ էր ու ինքնավստահ: Կատաղի վիճող մըն էր, ոչ մէկ գիշում կ'ըներ իր արուեստի ըմբռնումներէն: Կը քննադատէր այն բոլորը, որոնց գործերը չէր հաւնէր, այդ պատճառով ալ բազմաթիւ չսիրողներ ու «թշնամիներ» ունէր: Մնաց աղքատ ու չկրցաւ իր արուեստով օրապահիկը ապահովել ու տաղանդը ամբողջութեամբ դրսեւորել: Միջոցները կը պակսէին իրեն, կը նկարէր փոքր կտաւներու և կամ պատահական խաւաքարտերու ու թուղթերու վրայ: Քիչ կը ստեղծագործէր ու հազուադիւս պարագաներու միայն կը ցուցադրուէր: Կը մերժէր կողմնակի գործերով դրամ շահելու առաջարկները: Մնաց արուեստագետ, առանց հասկցուելու ու գնահատուելու: Ափսո՛ս... շատ ափսոս»:

Գուցէ, հարազատօրէն չկրցայ արտաբերել Ռաշիտ Ուսիպէի խօսքը, սակայն իր ամբողջութեանը մէջ իմաստն ու բովանդակութիւնը այս էր: Ան կը խօսէր խիստ զգացական ու յուզումով: Յուզուած էինք նաեւ մենք: Եմիլ Հաննուշ ակնարկ. «Փաստօրէն Կան Կոկի լիբանանեան տարբերակը: Այո՛, պէտք է որոնենք անոր գործերը ու բացայայտենք անոր տաղանդը...»:

Այդ օրէն ի վեր սկսայ պրպտումներու: Այսօր ձեռքիս տակ ունիմ բաւականին նիւթ իր մասին: Կան վկայութիւններ իր ժամանակակիցներէն (Ժողով Թարրապ, Կիւվտեր, Չաւէն Խտըշեան, Յարութիւն Թորոսեան), որոնք համակրանքով ու գնահատանքով խօսած են իր մասին: Կան երկու խմբային պատմական լուսանկարներ տրամադրուած՝ Յարութիւն Թորոսեանի կողմէ: Մեզ յայտնի են արդէն շուրջ երեսուն ստեղծագործութիւններ, որոնցմէ մէկը կը գտնուի Հայաստանի պետական պատկերասրահը: Տնօրէնի՝ Տիգրան Ճիմպաշեանի վկայութեամբ քանի մը հատ կան «Մ. եւ Հայկ Արսլանեան» ճեմարանի հաւաքածոյին մէջ: Որոշ թիւով գործեր կան նաեւ Տիգրան Թոսպաթի, Սիմոն Սիմոնեանի եւ փարիզաբնակ այլ արուեստասերի մը հաւաքածոյին մէջ: Հնարաւոր է, որ Չմմառի հայ կաթողիկէ վանքի հաւաքածոյի մէջ եւս յայտնաբերուին Ժան Դարբինեանի գեղանկարներէն, որովհետեւ վկայութիւններ կան այն մասին, թէ ան կեանքի վերջին տարիներուն հոն «ապաստանած» էր:



Տանիէլ Գզնունի իր «Հայ Կերպարուեստագետներ» համառօտ բառարանին մէջ տեղ տուած է նաեւ Ժան Դարբինեանին: Կը պարզուի, որ բուն անունը Յովհաննէս է եւ կը սերի «Չիլինկիրեան» գերդաստանէն: Ծնած է Կիւրին: 1937-1942 մասնագիտական կրթութիւն ստացած է Պէյրութի Ժորժ Միշլէի արուեստանոցէն ներս, իբրեւ դասընկեր ունենալով՝ Կալենցը, Յովհաննէս Ասատրեանն ու Թերճանը: Առաջին անգամ կը ցուցադրուի 1946-ին, իսկ 1956-ին ու 1961-ին կու տայ անհատական ցուցահանդէսներ Պէյրութի մէջ:

Իր վերջին ցուցահանդէսի առիթով, Սփիւռք շաբաթաթերթի 1962, 14 Յունիսի համարին մէջ Կարօ Բարսեղեան դրուատական յօդուածով մը կ'անդրադառնայ անոր ստեղծագործական կեանքին՝ «Ժան Դարբինեանի ցուցահանդէսը» խորագիրին տակ: Ըստ Գզնունիի անոր կարեւոր գործերն են. «Սպասում», «Աֆրիկայի ափերը», «Տուներ Համրայի մէջ», «Ոսկեղէն երազներ»,

«Փարոսը անձրեւի տակ», «Կարմիր ճառագայթներ», եւ այլն: Բացի Ռաշիտ Ուսահպէէն, ան կապեր ունեցած է նաեւ Նիքոլա Նամմարի, Ամին Էլ Սֆէյրի, Սալիմ Աթթարի եւ այլ լիբանանցի արուեստագետներու եւ մտաւորականներու հետ:

Բացի լիբանանեան եւ սուրիական շարք մը տեսարժան վայրերէ, ժան Դարբինեան պատկերած է նաեւ «Քարանթինա»-էն եւ «Քեմփ Սանճաք»-էն առնուած որոշ տեսարաններ, ուր գեղեցկօրէն ու ամենայն հարազատութեամբ դրսեւորած է հայ գաղթականներու կենցաղն ու առօրեան: Այս առումով անոր ստեղծագործութիւնները կը զգենուն նաեւ պատմամշակութային արժէք, յատկապէս երբ ի նկատի ունենանք, որ ան Եղեռնէն ճողոպրած հայ ստեղծագործող մըն է: Ցարդ անոր տոհմական ծագումն ու առհասարակ ստեղծագործական կեանքը կը մնան մուկ ու խորհրդաւոր:

Բացայայտելու պարագային աւելի լաւ պիտի կարողանանք ըմբռնել անոր արուեստն ու գնահատել զայն: Եւ որպէսզի հնարաւոր ըլլայ արժանին հատուցել արժանաւորին, հարկաւոր է միասնաբար աշխատիլ: Մեր ընթերցողներէն անոնք, որոնք ստեղծագործութիւններ եւ կամ որեւէ տեսակի տեղեկութիւններ ունին ժան Դարբինեանի մասին, կը խնդրուի կապ պահել մեզի հետ, որուն համար խորապէս շնորհակալ պիտի ըլլանք: Իսկ հնարաւորութեան չափ ամբողջական դարձնելու համար մեր հաւաքած տեղեկութիւններն ու ի լոյս աշխարհ բերելու՝ մոռացութեան ենթարկուած տաղանդ մը, կը խնդրուի հայ մամուլէն ու համացանցային լրատուամիջոցներէն արտատպել եւ կամ թէկուզ հակիրճ ձեւով անդրադառնալ այս թեմային:

Կապ [noahsark95@gmail.com](mailto:noahsark95@gmail.com) հեռ: + 9613727211 + 9614711852

